

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**

**ՄՊԱՆԴԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
2017-2021ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ  
ԾՐԱԳԻՐ**

*Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՇԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի կողմից՝*

*ԳՀՄԸ / ՀՖՄ «Աջակցություն Սպանդարյան համայնքի զարգացման ծրագրի մշակմանը և քննարկմանը» ծրագրի փորձագետների տեխնիկական խորհրդատվությամբ*

*Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Ավետիք Մխիթարյանի կողմից*

*Հաստատվել է՝ համայնքի ավագանու նոյեմբերի 15-ի  
թիվ 42-Ն որոշմամբ*

**ՄՊԱՆԴԱՐՅԱՆ 2016**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

### ՀԶԾ կառուցվածքը

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԹՕ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՖՄ ՀԿ փորձագետների կողմից մշակված և ՀՀ ՏԿԱԻՆ կողմից 2014 թվականին հավանության արժանացած՝ «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանությունը» ՀԶԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է նաև ՀԶԾ-ի մշակմանը մասնակցած՝ համայնքի ԲԱԽ-երի կողմից կատարված աշխատանքով և առաջարկություններով, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ, ինչպես նաև այն իրողությամբ, որ համայնքը ձևավորվել է համայնքների խոշորացման պետական փորձական ծրագրի իրականացմամբ, գտնվում է ՀՀ կառավարության, միջազգային դոնոր և տեղական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում և, այս առումով, մեծացել է համայնքի զարգացմանը և առկա խնդիրների լուծմանը նրանց ներգրավելու հնարավորությունները: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքի հանրային ծառայությունների մատչելիությանը և հասանելիությանը, նոր ծառայությունների մատուցմանը վերաբերող և դրանցով պայմանավորված՝ լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես

նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը) և դրանց կառավարման միջոցառումները:

ՀԶՀԾ-ն մշակելիս ուսումնասիրվել է նաև Սպանդարյանի նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման ծրագրերը, միտումները և դրանց շարունակականության հնարավորությունները:

Համայնքի 2017-21թթ. ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶՀԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, ՔՀՄՀ կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### • ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Աղյուսակ 1. Սպանդարյան համայնքի վարչական տարածքի, առկա և մշտական բնակչության, տնային տնտեսությունների ցուցանիշները

(01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Վարչական տարածքը (հա)	Առկա բնակչության և թվաքանակը (մարդ)	Մշտական բնակչության թվաքանակը (մարդ)	Առկա տնային տնտեսությունների թվաքանակը	Մշտական տնային տնտեսությունների թվաքանակը
•	Սպանդարյան	865	1815	1835	425	425

Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Արևշատ , Գեղանիստ, Գետափ , Փանիկ համայնքներին :

Սպանդարյան համայնքը գտնվում է Շիրակի մարզի հարավ արևմտյան մասում, զբաղեցնում է Մանթաշ գետի ստորին հոսանքի ավազանի աջափնյա մասը Սպանդարյան համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից 1810 մետր է:

Սպանդարյան համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից՝ 100 կմ է, մարզկենտրոն Գյումրիից՝ 25 կմ, տարածաշրջանային կենտրոն Արթիկ քաղաքից՝ 5 կմ:

Սպանդարյան համայնքի տարածքով է անցնում Մ-6 միջպետական նշանակության Գյումրի Ապարան Երևան ճանապարհը: Սպանդարյան գյուղի կլիման բարեխառն է , չափավոր շոգ և չորային ամառներով, ցուրտ ձմեռներով : Գարունը խոնավ է: Աշունը չափավոր է, երկրորդ կեսին՝ խոնավ: Տեղումների տարեկան քանակը կազմում է 600-650 մմ:

Սպանդարյան համայնքը ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում: Սպանդարյան համայնքում աճում են բժշկության մեջ օգտագործվող դեղաբույսեր: Հիմնական ծառատեսակներն են խնձորենին ,տանձենի բալենին սալորենին, կեռասենին և այլ դեկորատիվ ծառեր:

Սպանդարյան գյուղի տարածքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Բնական հուշարձաններ են գետի երկու ափերին թեք և աստիճանաձև բարձրացող լանջերի վրա տարբեր չափի քարախորշերով՝

Պատմամշակութային հուշարձանները տարբեր են ըստ կառուցման ժամանակահատվածի

- 1.Ամրոց Բ. Ա. 1-ին հազ Բ. Ա. 3-րդ ՄԵՊԱԳԻՐ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8-ԸԴ դար:
2. Քարայր- կացարան
- 3, Դամբարանադաշտ- ք.ա.11-1 հազ, 2հատ 5-8 դարի
4. Ջրագացներ- 4հատ XIX դարի
5. Գերեզմանոցներ- 19-20-րդ դարի 3 հատ
6. Բնակելի տներ 3 հատ –XIX դարի
7. Եկեղեցի „Սուրբ Ամենափրկիչ ..եկեղեցին

*Համայնքի ընդհանուր նկարագրություն*

**ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 1835 մարդ, այդ թվում՝ սղամարդիկ՝ 1074 և կանայք՝ 761 : Ըստ բնակավայրերի համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը բերված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք
1	2	3
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	1835
	Տղամարդիկ	1074
	Կանայք	761
	0-6 տարեկան , այդ թվում՝	167
	• 0-3 տարեկան	73
	• 3-6 տարեկան	94
	7-17 տարեկան	238
	18-63 տարեկան	
2.	63-ից բարձր տարեկան Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	138
	Տարիքային և աշխատանքային	163
3.	Փախստականներ	0
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	25
5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	17
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	45
	Մանկուց հաշմանդամներ	15
9.	Աշխատունակներ	860
10.	Զբաղվածներ	860
11.	Գործազուրկներ, այդ թվում՝	0
	Գրանցված	0
12.	Առկա տնային տնտեսությունների թիվը	425
13.	Ընտանեկան նպաստների	95

	պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը, այդ թվում՝ Նպաստառու ընտանիքների թիվը	95
14.	Հայրենական մեծ և արցախյան պատերազմներում զոհվածների ընտանիքների թիվը	4
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	55
16.	Անօթևան ընտանիքներ Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	7 55
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	250
18.	Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թիվը	300

• **ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

2016թ. Հոկտեմբերի 2-ին կայացած ՏԻՄ-ի ընտրությունների արդյունքում ընտրվել են համայնքի ավագանին՝ բաղկացած 7 անդամից; Համայնքի ղեկավարը, որը ընտրվել է 2015թվականի օգոստոսի 23-ին ձևավորել է համայնքի աշխատակազմը՝ բաղկացած 9 աշխատակցից:

Համայնքի ավագանին 2016 թվականի նոյեմբերի 15 1-ի թիվ 41 -Ա որոշմամբ հաստատել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

- համայնքի ղեկավար - 1 միավոր, 245,0 հազ. դրամ,
- համայնքի ղեկավարի տեղակալ - 1 միավոր, 100,0 հազ. դրամ,
- աշխատակազմի քարտուղար - 1 միավոր, 180,0 հազ. դրամ,
- գլխավոր մասնագետ – ֆինանսիստ /թափուր/-1 միավոր, 175,0 հազ.
- առաջին կարգի մասնագետ - 1 միավոր 172,0 հազ. դրամ,
- երկրորդ կարգի մասնագետ /թափուր- 1 միավոր, 110,0 հազ. դրամ,
- հարկային գործակալ 1 միավոր, 90 ,0 հազ. դրամ:
  
- հավաքարար - 1 միավոր, 90,0 հազ. դրամ:

- *օպերատոր* *1 միավոր 78,0 հազ. դրամ*
- *ակումբավար* *1 միավոր 90,0 հազ. դրամ*  
*Ընդամենը* *9 միավոր, 1085.000 հազ.*

- *ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ*

*Համայնքի սեփականությունն են հանդիսանում համայնքի սեփականությունն համարվող գույքը, որի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ :*

*Համայնքի սոցիալ-տնտեսական յուրաքանչյուր ենթակառուցվածքի վիճակի գնահատումը կատարվել է՝ օգտագործելով Ներդիր 1-ում բերված գնահատման չափանիշները (գնահատականները):*

- *ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

*Համայնքի վարչական տարածքում գործող պետական կազմակերպություններն են՝ Սպանդարյանի միջնակարգ դպրոցը ՊՈԱԿ-ը, բուժ կետը և Սպանդարյանի նախադպրոցական ՀՈԱԿ-Ը :*

- *«Ռուդիկ Սահակյան» անհատ ձեռներեց /ա/ձ /*
- *«Ռիմա Հովհաննիսյան» ա/ձ,*
- *«Անժիկ Ստեփանյան» ա/ձ*
- *Արթուրիկ Սահակյան» ա/ձ*
- *Արագ Հարությունյան ա/ձ*

• **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Սպանդարյան համայնքը չունի գլխավոր հատակագիծ, չունի (գոտիավորման նախագիծ,, քաղաքաշինական կադաստր:

Հասարակական կառուցապատումը կենտրոնացած է մշակույթի տան , ձևավորված տարածքի շուրջ, հիմնանորոգվել է մշակույթի տունը; Մոտակա 2016-2017թվականներին դեկտեմբեր ամսին ամբողջ մշակույթի տունը կհամայրվի ժամանակակից գույքով և անհրաժեշտ պարագաներով համայնքի երիտասարդության ժամանցային հանգիստը լիարժեք կազմակերպելու համար:

Փողոցային ցանցը կազմակերպված է մեկ հիմնական փողոց-առանցքից, միմյանց հաջորդող մոտեցումներով:

Սպանդարյան համայնքի ջրամատակարարումը կատարվում է գրաֆիկով : Ջրամբարների վիճակը բավարար չէ, և անցանկապատ, համայնքում կատարվում է ջրամատակարարման նոր համակարգի կառուցում ,շահագործման կհանձնվի 2017-ին, ավագանու արդեն իսկ կայացրած որոշմամբ դրանք սեփականության իրավունքով հանձնվել են «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին:

Սպանդարյան համայնքը գազաֆիկացված է, բնակչությունը, մանկապարտեզը և դպրոցն օգտվում են կապույտ վառելիքից: Սպանդարյան համայնքում 2017թվականից կկառուցվի նոր տիպային ժամանակակից մանկապարտեզ ,որը նախատեսվում է երեք խմբի համար որում կընդկրվի համայնքի բնակչության 3-5 տարեկան բոլոր երեխաները , աշխատանքները կսկսվեն գարնան բացվելուն պես : Ծրագրի արժեքը կազմում է 177. 777.777 դրամ , շահագործման կհանձնվի 2018 թվականին, համայնքի ներդրումը կազմում է 14000.000 դրամ:

Սպանդարյան համայնքում աղբահանությունը իրականացվում է ամիսը 2 անգամ:

Սպանդարյան համայնքի գերեզմանատունը ցանկապատված է,սակայն ունի վերանորոգման խնդիր , որի պատճառով անասուններն անարգել մուտք են գործում այդ գերեզմանատան տարածքներ՝ առաջացնելով բնակչության արդարացի դժգոհությունը: Նախասեսնվում է կատարել ցանկապատի հիմնանորոգում և տարածքի բարեկարգում :

**ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ**

Համայնքում բազմաբնակարան մեկ բնակելի շենք , որը նախկինում ծառայել է դրսից եկած ուսուցիչների համար ,սակայն այժմ բնակեցված է համայնքի թվով չորս բնտանիքներով : Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքը երկու հարկանի է (բնդամենը՝ 4 բնակարան): Բնակֆոնդի բնդհանուր մակերեսը կազմում է 708 քմ, որից՝ 708 քմ-ը համայնքային սեփականություն է: Համայնքում կիսակառույց բնակելի



շենքերի թիվը 24 է, առանձնատների թիվը՝ 370, բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը՝ 35:

Համայնքի առանձնատների մեծ մասը վերանորոգման կարիք ունեն, նորաբաժան ընտանիքների համար անհրաժեշտ են նոր առանձնատներ: Մակայն, բնակչության սոցիալական վատ պայմանների պատճառով առանձնատների վերանորոգման աշխատանքներ կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքերում, իսկ նոր առանձնատներ համարյա չեն կառուցվում:

## ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 866,35 հա, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 678,37 հա, բնակավայրի հողեր՝ 167,15 հա, արդյունաբերական, արտադրական շինությունների տակի հողեր՝ 3,56 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 2,32 հա, հատուկ պահպանվող տարածքներ և մարզամշակութային 4,05 հա, ջրային ֆոնդի հողեր՝ 10,9 հա:

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ համայնքի բնակավայրերում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմել է 0,82 հա:

## • ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, բացի դրանից համայնքի առջև ծառայած է ոռոգման ջրի խնդիրը, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի ստանալ: Համայնքում զարգացած է անասնապահությունը: Մակայն, դրա հետագա զարգացման համար համայնքում խոտհարքների տարածքները չեն բավականացնում:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ, համայնքի խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 1188 , այդ թվում կովեր՝ 638: Ոչխարների և այծերի գլխաքանակը կազմել է՝ 149, ավանակ 1 , ձիերի՝ 2, հավերի և այլ թռչունների՝ 3514, մեղվաբնտանիքների քանակը՝ 205:

Համայնքի տնային տնտեսությունների մի մասը հաջողությամբ զբաղվում է մեղվաբուծությամբ, կա զարգացման մեծ հեռանկար:

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ և մեղվապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր : Համայնքի բնակիչներն

իրենց տնամերձերում աճեցնում են կարտոֆիլ, բանջարաբուստանային կուլտուրաներ, զբաղվում են նաև պտղաբուծությամբ (տանձ, խնձոր, սալոր), մշակում են հացահատիկային, կերային մշակաբույսեր՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար:

Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում:

**Հավելված 2.1. Սպանդարյան համայնքի սոցիալ-տնտեսական**

**ենթակառուցվածքների վիճակի գնահատում**

№/հ	Կառույցը	Հասցեն	Կառուցման տարեթիվը	Ծավալը	Ընդհանուր վիճակի գնահատականը	Նորոգման / վերականգնման / փոխարինման կարիքը	Այլ նշումներ
1.	Սպանդարյանի գյուղապետարանի շենք	գ. Սանդարյան	1968	510քմ	բավարար	վերանորոգման	
2.	Մշակույթի տուն	գ. Սանդարյան	1968	476 քմ	լավ	Գազաֆիկացման կարիք	
3.	Նախկին մանկապարտեզի շենք	գ. Սանդարյան	1950	402 քմ	վատ	հիմնանորոգման	
4.	Խմելու ջրի ներքին ջրամատակարարման համակարգ	գ. Սանդարյան	1970	3կմ	լավ		
5.	մարզադաշտ	գ. Սանդարյան	1987 թ.	1հա	անբավարար	հիմնանորոգում	
6.	Կամուրջներ	գ. Սանդարյան		6,0 կմ	վատ	նորոգման, բարեկարգման	
7.	Ներբնակավայրային փողոցներ	գ. Սանդարյան		7,0 կմ	վատ	նորոգման, բարեկարգման	
8.	Գերեզմանատուն	գ. Սանդարյան		2 հատ	բավարար	ցանկապատման	1-ը

**ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆ ' ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ**

Ցուցանիշները 2	Ընդամենը համայնքում 3
Համայնքի վարչական տարածքը (հա), այդ թվում՝ Համայնքային Պետական	866,35 353,46 14,36
Բրավարանական և ֆիզիկական անձանց սեփականություն	498,53
Գյուղատնտեսական նշանակության հողեր, այդ թվում՝ Համայնքային	678,37 314,01
Պետական Բրավարանական և ֆիզիկական անձանց սեփականություն	364,36
Բնակելի շինությունների տակի հողեր, այդ թվում՝ Համայնքային	134,03 0
Պետական Բրավարանական և ֆիզիկական անձանց սեփականություն	0 134,03
Արդյունաբերական, արտադրական շինությունների տակի հողեր, այդ թվում՝ Համայնքային Պետական	3,56 3,42 0
Բրավարանական և ֆիզիկական անձանց սեփականություն	0,14
Ընդերքօգտագործման հողեր, այդ թվում՝ Համայնքային	0 0
Պետական	0
Բրավարանական և ֆիզիկական անձանց սեփականություն	0
Ճանապարհների տակ հողեր, այդ թվում՝ Համայնքային	20,85 0
Պետական Բրավարանական և ֆիզիկական անձանց սեփականություն	20,85 0
Առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր, այդ թվում՝ Համայնքային Պետական	4,05 2,85 1,20
Բրավարանական և ֆիզիկական անձանց սեփականություն	0
Անտառային ֆոնդի հողեր, այդ թվում՝ Համայնքային	0 0
Պետական	0

Իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն	0
Ջրային ֆոնդի հողեր, այդ թվում՝	10,90
Համայնքային	2,08
Պետական	8,82
Իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն	0
Հատուկ պահպանվող տարածքներ, արգելոցներ, այդ թվում՝	0
Համայնքային	0
Պետական	0
Իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն	0
Համայնքի այլ հողեր, այդ թվում՝	0
Համայնքային	0
Պետական	0
Իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն	0
Վարելահողեր, այդ թվում՝	678,37
Սեփականաշնորհված	364,36
Խոտհարքեր, այդ թվում՝	0
Սեփականաշնորհված	0
Արոտներ, այդ թվում՝	215,64
Սեփականաշնորհված	0
Այլ գյուղատնտեսական հողեր, այդ թվում՝	17,43
Սեփականաշնորհված	0

**ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՄՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ ՍՊԱՆԴԱԼՅԱՆ  
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ (01.01.2016 թ. դրությամբ)**

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1	2	3
1.	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, այդ թվում՝	1288
	Կովեր	638
2.	Խոզերի գլխաքանակը	25
3.	Ոչխարների և այծերի գլխաքանակը	149

4.	Ավանակների և ջորիների գլխաքանակը	2
5	Զիերի գլխաքանակը	2
6.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	1595
7.	Նապաստակների և ճագարների գլխաքանակը	35
8.	Մեղվարնտանիքների քանակը	205

**ԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016-2020թթ. ՀԶՀԾ-ՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ**

1. Կարկտակայանի տեղադրում
2. Գյուղապետարանի շենքի վերանորոգման աշխատանքների ավարտ
3. Փողոցների լուսավորության ընդլայնում
4. Մանկապարտեզի շենքի կառուցում ,գույքի ձեռք բերում
5. Մշակույթի տան գույքի ձեռք բերում
6. Մարզադաշտի վերանորոգում
7. Գերեզմանների պարիսպի վերանորոգում
8. Մերձհամայնքային ճանապարհների վերանորոգում
9. Հանգստի գոտու ստեղծում
10. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում
11. Ոռոգմամ փակ համակարգի անցկացում
12. Ուրարտական արձանագրության պահպանում

**ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋՍՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

Սպանդարյան համայնքն իր ուժերով ի վիճակի է լուծելու աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպումը, այդ ուղղությամբ անհրաժեշտ է պետական մարմինների աջակցությունը նոր աղբավայրի կառուցման հարցում կամ ծավալել միջհամայնքային համագործակցություն՝ Սպանդարյան համայնքում առկա աղբավայրը համատեղ օգտագործելու ուղղությամբ:

Վիճակն անմխիթար է Մանթաշի ջրամբարի տարածքում ,քանի որ համայնքը օգտվում է Մանթաշի ջրամբարից , որոշ հատվածներում ջուրը՝ մինչև ջրամբար հասնելը, հոսում է բաց վիճակում, և այնտեղ անարգել մուտք են գործում անասունները: Դա հղի է սուր վարակիչ հիվանդությունների առաջացման վտանգով:

Համայնքի ՏԻՄ-ի մշտական վերահսկողության տակ է գտնվում բնության և շրջակա միջավայրի պահպանությունը:

• **ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Համայնքի բնակավայրերը Արթիկ քաղաքին կապող միջհամայնքային ճանապարհները ասֆալտապատ են, որոշ տեղերի քանդման պատճառով դարձել են դժվար անցանելի, ձմռանը՝ երբեմն նաև անանցանելի: Սպանդարյան համայնքի ներբնակավայրային ճանապարհների մոտ 10%-ը անբարեկարգ են, համայնքի ներբնակավայրային ճանապարհները գրունտային են, գտնվում են լավ վիճակում: Համայնքի կենտրոնում տեղակայված են ճանապարհային երթևեկության նշաններ: Համայնքի ներսում ավտոկանգառներ կան: Համայնքում գործում են հետևյալ երթուղիները--

Մանթաշ -Սպանդարյան -Գյումրի , Գեղանիստ -Սպանդարյան -Գյումրի , Արթիկ- Սպանդարյան- Գեղանիստ ,Արթիկ- Սպանդարյան- Երևան :

Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 13 կմ: Համայնքի կենտրոնով անցնող մարզային անցնող ճանապարհը ասֆալտապատ է: Ներբնակավայրային փողոցները կարիք ունեն վերանորոգման ու բարեկարգման, չունեն ջրահեռացման համակարգ :

Համայնքի բնակչությունը հիմնականում օգտվում է Արթիկ քաղաքի շուկայից:

Համայնքում շահագործվում են 120 մարդատար և 11 բեռնատար մասնավոր ավտոմեքենա, մասնավոր 7 տրակտոր, որոնցից 1-ը թրթուրավոր են, իսկ 5-ը՝ անհիվավոր:

Համայնքի տարածքում կան 2 փոքր կամրջակ՝ գյուղով անցնող գետակի վրա:

## ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում են 5 առևտրի կետ, որոնք հիմնականում զբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով: Նրանք բոլորն էլ հաշվառված են պետական հարկային մարմնում, ինչպես նաև տարվա կտրվածքով վճարում են համապատասխան տեղական տուրք համայնքի բյուջե՝ գործունեության թույլտվության համար:

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Սպանդարյան համայնքում գործում է միջնակարգ հանրակրթական դպրոց, որտեղ սովորում են 226 աշակերտ: Դպրոցում կա 35 աշխատող, որոնցից 31 -ը մանկավարժ են: Դպրոցի շենքը կարիք ունի ներքին հիմնանորոգման : Ձմռանը դպրոցի շենքը ջեռուցվում է գազով

Համայնքում գործում է նախակրթարան ուր հաճախում են 20 երեխա և աշխատում են 2 աշխատող:

## ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Սպանդարյան համայնքի դպրոցում կա գրադարան: Համայնքի գրադարանը տեղակայված է մանկապարտեզի մի սենյակում, որը գտնվում է անմխիթար վիճակում, ունի մոտ 2500 կտոր գրքային ֆոնդ: Համայնքի գրքերը նպատակահարմար է հանձնել դպրոցի գրադարանին:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքի տարածքում գործող բուժ կետում աշխատում է 1 բժիշկ, 1 բուժքույր: Բուժ կետը ապահովված է խմելու ջրով, առաջին բուժօգնության պարագաներով: Բուժկետը տեղակայված է համայնքապետարանի շենքում, այն գազաֆիկացված է :

Սպանդարյան համայնքում գործում է մարզադաշտ և խաղահրապարակ, որտեղ կազմակերպվում են ֆուտբոլի մրցումներ տարբեր համայնքների թիմերի միջև: 2017թվականին նախատեսվում է մարզադաշտի ընդհանուր հիմնանորոգում :

**ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ,  
ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ**

Համայնքի տարածքում եկեղեցու հարևանությամբ կա հանգստի գոտի և գեղեցիկ հուշադրյուր , որտեղ համայնքի բնակիչները անց են կացնում իրենց հանգիստը:

**ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

Համայնքում կան 1100 աշխատունակ մարդիկ, որոնցից մշտական աշխատանքով (այդ թվում՝ գյուղատնտեսական) զբաղված են 1100ը, համայնքի բնակիչները հիմնականում հողերի սեփականատերեր են և, համաձայն ՀՀ օրենսդրության, չեն համարվում գործազուրկ:

Համայնքի մոտ 425 ընտանիքներից 97-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառուներ են գնահատվել 97 ընտանիքները ; Համայնքում բնակվում են նաև 45 հաշմանդամ և միակողմանի ծնողազուրկ 25 երեխա, բնակարանի կարիքավոր են 55 ընտանիքներ, բնակարանի բարելավման կարիք ունեն 106 ընտանիքներ:

Համայնքի բնակիչները սոցիալական ծառայություններ մատուցվում են հիմնականում Արթիկի ՄՕՏԳ-ի և համայնքապետարանի կողմից ;

**ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ**

Համայնքի բնակիչները վերջին տարիների ընթացքում նկատելի դրական տեղաշարժ է նկատվում ՏԻՄ-ի և բնակչության փոխհարաբերություններում: Ներկայումս նոր ձևավորված ՏԻՄ-ի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-ի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ-ի կողմից կազմակերպված հանրային լսումներին և հանդիպումներին : 2013-2014թթ.-ին „UCOM „, ընկերության կողմից կառուցված՝ համայնքային կենտրոնի սենյակում, կազմակերպվում են հանրային լսումներ և քննարկումներ (մասնավորապես, համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-ի աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ: Հիմնականում բոլոր միջոցառումները, այդ թվում նաև ավագանու նիստերը, հեռարձակվում են առցանց տարբերակով՝ համայնք <http://www.spandaryan.am/> ինտերնետային կայքի միջոցով, որը նպաստում է ՏԻՄ-ի գործունեության նկատմամբ բնակչության վստահության ամրապնդմանը:



Մայանդարյան համայնքը դեռևս 2013 թվականին ընդգրկվել է «Բաց կառավարման գործընկերություն / Հայաստան» գործողությունների ծրագրում և այդ շրջանակներում 1 անգամ համայնքում SMS-ների միջոցով անցկացվել են համայնքային միկրոհարցումներ՝ համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ բնակչության կարծիքը հաշվի առնելու համար: Այս առումով, նախկինում ձեռք բերված դրական փորձը պետք է կիրառեն նաև նորընտիր ՏԻՄ-ը:

Համայնքի ավագանու կողմից ընդունվել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը, որոնք մեծապես կնպաստեն բնակիչների ավելի ակտիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը: Ստեղծվել են խնամակալության և հոգախարձուների խորհուրդ, որոնք ակտիվ գործունեություն են ծավալում բնակչության խոցելի և կարիքավոր ընտանիքներին, անհրաժեշտության դեպքում, ճիշտ և օրեկտիվ որոշումներ կայացնելու գործում: Այս հանձնաժողովը գործում է դեռևս օրենքի կայացման ժամանակվանից:

## **ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՄԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը ներկայումս սաղմնային վիճակում է: Ավագանու որոշմամբ ստեղծվել է աղետների դեպքում համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով, հաստատվել է բնակչության տարահանման գործողությունների պլանը:

Համայնքում այժմ իրականացվում է տեղական մակարդակով խոցելիության և կարողությունների գնահատման գործողություններ, որի հիման վրա հնարավոր կլինի պլանավորել ու իրականացնել համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման նպատակամետ գործողություններ ու միջոցառումներ:

## **ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ**

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող 5 ԱԶ-ների և «Արոտ օգտագործողների գործունեությամբ», որոնց հետ ՏԻՄ-ը պաշտպանում է լավ ու բարյացկամ հարաբերություններ:

Եվ այպես, համայնքի իրավիճակի բնութագրման և գնահատման ընդհանուր և ոլորտային հիմնական ցուցանիշները բերված են հավելված 5-ում: Այդ ցուցանիշները երկու տեսակի են՝ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը (միջավայրը) բնութագրող (ոչ ֆինանսական) և ֆինանսական ցուցանիշներ:

Հիմնվելով համայնքում տիրող փաստացի իրավիճակի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման արդյունքների վրա՝ կարելի է արձանագրել ներկայումս առկա ընդհանուր և ոլորտային հիմնական հիմնախնդիրները: Դրանք են՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքը գրկված է ռոտզման ջրից :
- Համայնքը չունի գլխավոր հատակագիծ, համայնքը չունի քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթեր;
- Համայնքը չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի),
- համայնքը չունի ժամանակակից աղբավայր, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազա :
- Ներհամայնքային ճանապարհները և փողոցները անբարեկարգ վիճակում են, համայնքը չունի գյուղատնտեսական հողերի ռոտզման համակարգ, համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ՝ արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու հարցում:
- Համայնքի համայնքային սեփականություն համարվող գրադարանը, մշակույթի տունը չունի ջեռուցման համակարգ , համայնքի գերեզմանատունը ցանկապատված է սակայն ունի վերանորոգման խնդիր:
- համայնքի աշխատունակ բնակչության մոտ 30 %-ը չունի մշտական աշխատանք, այդ պատճառով հաճախ բնակիչների մի որոշակի մասը մեկնում է արտագնա աշխատանքի այլ երկրներ, մեկնողներից ոչ բոլորն են վերադառնում համայնք:

Համայնքի հիմնախնդիրների ցանկը կարելի է շարունակել, սակայն, ակնհայտ է, որ հնգամյա ժամանակահատվածում անհնար է լուծում տալ համայնքում առկա բոլոր հիմնախնդիրներին: Վերևում թվարկված հիմնախնդիրներից անհրաժեշտ է առանձնացնել նրանք, որոնց լուծումն, իրատեսականության տեսանկյունից, նպատակահարմար է ներառել համայնքի 2016-2021թթ. ՀԶԲԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից և համայնքի հետագա զարգացման՝ ՏԲՄ- ի ընտրած ռազմավարությունից և սահմանած հիմնական նպատակներից:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՇՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի աշխարհագրական լավ դիրքը (մոտիկությունը մարզկենտրոն Գյումրիին, տարածաշրջանային կենտրոն Արթիկին, տարածքով անցնող հանրապետական նշանակության Գյումրի- Արթիկ- Երևան ճանապարհը)

- Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար առկա հողային բավականին մեծ ռեսուրսների առկայությունը :
- Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման
- Համայնքի հանրակրթական դպրոցի, նախակրթարանի նոր-կառուցվող մանկապարտեզի ,նորակառույց մշակույթի տան և բուժ կետի գործունեությունը:
- Համայնքում հեռախոսակապի, ինտերնետ կապի և հեռուստատեսության առկայությունը :
- Համայնքի խմելու ջրի նոր կառուցվող ներհամայնքային համակարգերի առկայությունը
- Համայնքի ՀՈԱԿ-ի գործելը
- Համայնքի տարածքում պատմամշակութային հուշարձանների (եկեղեցիներ, մատուռների, ամրոցների, գյուղատեղիներ) առկայությունը:
- Համայնքի գիշերային լուսավորության ցանցի առկայությունը:
- Նոր վերանորոգվող մարզադաշտի առկայությունը:
- Համայնքը գազաֆիկացված է 98%-ով :
- 

#### **ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- ՀՀ կառավարության, միջազգային դոնոր և տեղական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում, աստիճանաբար մեծացնել համայնքում առկա խնդիրների լուծմանը նրանց ներգրավվածության շրջանակները
- Խթանել ՔՀՄՀ-ից որակյալ մասնագետների հոսքը համայնքի աշխատակազմ և հնարավորինս բարձրացնելով համայնքային ծառայողների և այլ աշխատողների աշխատավարձերի դրույքաչափերը
- Էականորեն բարձրացնել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ի հաշիվ տեղեկատվական արդի համակարգերի ներդրման և արդյունավետ շահագործման
- Բարձրացնել ՏԻՄ-ի ինքնուրույնության մակարդակը՝ մշակելով և իրականացնելով նպատակամետ ու արդյունքահեն համայնքային քաղաքականություններ, ռազմավարություններ և ծրագրեր
- Աստիճանաբար ընդլայնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների շրջանակը, կիրառել յուրաքանչյուր ծառայության մատուցման մասշտաբի էֆեկտը (նվազեցնելով ծառայության միավորի վրա կատարվող ծախսերը), ըստ այդմ՝ բարձրացնել ծառայությունների մատուցման ծավալները և արդյունավետությունը, և, որպես հետևանք, բնակչությանը դրանց հասանելիության և որակի մակարդակները
- Էականորեն մեծացնել համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված հնարավորությունները՝ կապված համայնքի սեփականություն համարվող հողային, գույքային և ֆինանսական ռեսուրսների բազային ծավալների մեծացման և դրանց նպատակային օգտագործման հետ

- Համայնքի տարածքում նպաստել տնտեսության տարբեր ճյուղերի (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) զարգացմանը՝ օգտվելով համայնքում պատմամշակութային և այլ արժեքների առկայությունից
- Նպաստել համայնքի ավագանու ինստիտուտի կայացմանը, որի շնորհիվ կուժեղանա համայնքի ներքին վերահսկողության համակարգը և, արդյունքում, կբարձրանա համայնքի ընդհանուր կառավարման արդյունավետությունը
- Բարձրացնել համայնքի ՏԻՄ-երի փոխհարաբերությունների և համագործակցության մակարդակը ՀՀ պետական կառավարման մարմինների հետ՝ նպաստելով համայնքի աստիճանական զարգացմանը
- Հնարավորինս արագ կայանալ և պատրաստ լինել՝ ընդունելու և իրականացնելու ՏԻՄ-երին օրենքով ակնկալվող նոր սեփական և պատվիրակված լիազորություններ՝ համապատասխան ֆինանսական միջոցներով
- Համայնքում ստեղծել լուրջ նախադրյալներ և նպաստավոր պայմաններ ժողովրդագրական աճի, սոցիալ-տնտեսական և տեղական ժողովրդավարության զարգացման համար՝ հիմնելով նոր աշխատատեղեր, ավելացնելով ընտանիքների եկամուտները և բարձրացնելով բնակչության ընդհանուր կենսամակարդակը, հաղթահարելով աղքատությունը և կանխելով արտագաղթը
- Համայնքի վարչական տարածքում զարկ տալ ջերմոցների ստեղծմանը՝ նպաստելով գյուղատնտեսության զարգացմանը
- Տարածաշրջանի այլ համայնքների հետ միջհամայնքային համագործակցություն ծավալելու դեպքում հնարավոր կլինի լուծել ընդհանուր աղբավայր ունենալու և շահագործելու հարցը, համայնքում պատշաճ մակարդակով կազմակերպելու աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը
- Ներհամայնքային տրանսպորտային հաղորդակցության, ինչպես նաև հաղորդակցության այլ միջոցների հասանելիության ապահովման միջոցով նպաստել ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության, համայնքային ծառայությունների մատուցման մակարդակի կտրուկ բարձրացմանը, արտաքին աշխարհի հետ նոր կապերի ու համագործակցության հաստատմանը և համայնքային տնտեսությունում լրացուցիչ ներդրումների ապահովմանը:

### **ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ**

- Խմելու ջրի ջրամատակարարման բաց ավագանների առկայության պատճառով համայնքում սուր վարակիչ հիվանդությունների առաջացման վտանգը
- Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման համակարգերի բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը:

- Աղբավայրի բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը
- Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը
- Աշխատատեղերի բացակայություն պատճառով համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը:
- Հակակարկտային կայանների բացակայությունը:

• **ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ**

Համայնքի տեսլականն է՝

Սպանդարյան համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ տարածք:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազլիաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի, վերամշակման արտադրամասերի ստեղծում և գործարկում,
- համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում,
- համայնքի տարածքի համեմատական առավելությունների բացահայտում և առևտրայնացում, այդ նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ՔՀՄՀ-ի կազմակերպությունների համագործակցության շրջանակների ընդլայնում և ջանքերի մեկտեղում,
- համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման,

համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով,

- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- ներբնակավայրային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, ջրահեռացման և ճանապարհային նշանների տեղադրում, ավտոկանգառների ժամանակակից տաղավարների կառուցում,
- համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների տեսակների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման, հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- համայնքի ՏԻՄ-ի, աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների աստիճանական հզորացում, տեղական ժողովրդավարության ամրապնդում, համայնքում պատշաճ կառավարման սկզբունքների հետևողական իրականացում:
- ՏԻ-անը բնակիչների ներգրավվածության բարելավում՝ բնակիչների մասնակցության ձևերի ներդրման և զարգացման միջոցով,
- ՏԻՄ-ի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում,
- համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների ներդրում և հետևողական կիրառում,
- նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչության թվաքանակի կայունացում:

Համայնքի զարգացման 2016-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն

են՝

- ՏԻ-անը բնակիչների մասնակցության ակտիվացում՝ մասնակցության նոր մեթոդների և ձևերի ներդրման և աստիճանական զարգացման միջոցով,
- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության, թռչնապահության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- ներբնակավայրային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում,
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների խմելու և տեխնիկական ջրի ջրամատակարարման

աղբահանության և սանիտարական ծառայությունների կազմակերպման և մատուցման ճանապարհով,

- համայնքի բնակչությանը հանրային ծառայություններ մատուցող համայնքային հիմնական ենթակառուցվածքների / գրադարանի, բուժկետերի) շենքերի հիմնանորոգում կամ վերակառուցում,
- համայնքում գործարար միջավայրի բարելավում՝ նոր աշխատատեղեր ստեղծող անհատներին և կազմակերպություններին խրախուսելու (օրինակ, տեղական հարկերի, տուրքերի և վճարների գծով արտոնություններ տրամադրելու) միջոցով:

- **ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ)  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

2016-2021թ.թ. ընթացքում համայնքի ՏԻՄ-ը նախատեսում է լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Շիրակի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2016-2021թ.թ.-ին նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով:
- Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության և մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում:
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, արտակարգ իրավիճակներում համայնքի գործողությունների պլանի առավել ընդլայնում կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:
- ՀՏՉՀ-ի հետ՝ «Համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգման և սպասարկման, աղբահանության ծառայությունների ստեղծում, ներհամայնքային հասարակական տրանսպորտի համակարգի ձևավորում, դպրոցականների ու երիտասարդության շրջանում բնապահպանական և ազրոբիզնեսի կառավարման գիտելիքների տարածում» ծրագիրը:

- Ոռոգման փակ համակարգի կառուցում հարևան համայնքների հետ:
- Հնարավոր այլ ծրագրեր ու միջոցառումներ :

2016-21թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և ՀՀ Շիրակի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները: Մասնավորապես, նախատեսվում է շարունակել համայնքի սերտ համագործակցություն << Ս! GOM>>-ի հետ նախադպրոցական և դպրոցական կրթության, առողջապահության, երեխաների սոցիալական պաշտպանության, մշակույթի և սպորտի, տեղական ժողովրդավարության և մասնակցության, զբոսաշրջության, մարդու իրավունքների, համայնքային զարգացման և այլ ոլորտներում:

### ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Աղյուսակ 3. Համայնքի 2015-2016թ.թ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2016-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. նախատ.	2016թ. փաստ.	2017թ. նախատ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
	<b>ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*</b>	<b>37468,3</b>	<b>37882,9</b>	<b>38059,8</b>	<b>38476,0</b>	<b>39976,0</b>	<b>40,476,0</b>	<b>41,976,0</b>	<b>43,976,0</b>
I.	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*</b>	<b>37468,3</b>	<b>37882,9</b>	<b>38059,8</b>	<b>38476,0</b>	<b>39976,0</b>	<b>40,476,0</b>	<b>41,976,0</b>	<b>43,976,0</b>
1.	<b>ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ</b>	<b>4782,8</b>	<b>5011,0</b>	<b>5020,0</b>	<b>4899,4</b>	<b>4899,4</b>	<b>4999,4</b>	<b>5000,5</b>	<b>5100,0</b>
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	2475,4	2475,4	2675,4	2475,4	2475,4	2475,4	2475,4	2475,4
	Հողի հարկ	2475,4	2475,4	2475,4	2475,4	2495,4	2495,4	2510,4	2510,4
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	2211,4	2493,6	2493,6	2328,0	2428,0	2528,0	2728,0	2828,0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	2211,4	2493,6	2493,6	2328,0	2428,0	2528,0	2728,0	2828,0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման	96,0	96,0	96,0	96,0	120,0	120,0	130,0	130,0



	թույլտվության վճարներ								
2.	Տեղական տուրքեր	96,0	96,0	96,0	96,0	120,0	120,0	130,0	130,0
	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	31886, 0,0	32655,0	32655,0	33550,6	33550,6	34045,0	34643,0	35435,0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	31651, 0	32420,0	32420,0	33115,6	33115,6	33810,0	34408,0	35200,0
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ								
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	31651, 0	32420,0	32420,0	33115,6	33115,6	33810,0	34408,0	35200,0
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	31651, 0	32420,0	32420,0	33115,6	33115,6	33810,0	34408,0	35200,0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	235,0	235,0	235,0	235,0	235,0	235,0	235,0	235,0
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	1500,0	1500,0	1500,0	1500,0	1500,0	1500,0	1500,0	1500,0
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (տուրվենցիաներ)	1500,0	1500,0	1500,0	1500,0	1500,0	1500,0	1500,0	1500,0
3.	ԱՅԼ ԵՎԱՄՈՒՏՆԵՐ*								
3.1	Տոկոսներ								
3.2	Շահաբաժիններ								
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	398,6	398,6	398,6	461,0	661,0	700,0	861,0	861,0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	398,6	398,6	398,6	461,0	661,0	700,0	861,0	861,0
3.9	Տեղական վճարներ Այլ եկամուտներ*	0	0	0	30,0	40,0	50,0	60,0	70,0
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային	623,0	200,0	200,0	500,0	1000,0	15000	1500,0	1600,0

2.3	բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր								
	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	3341,3	6800,0	200,0	500,0	700,0	700,0	700,0	
		4092,5							

**ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՅՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ**

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայում արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-երի կողմից ընտրված ռազմավարությունից, առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից և ՀՈԱԿ-ի կողմից արված առաջարկություններից, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ 4)՝ ներառելու համայնքի 2016-2021թթ. ՀԶՀԾ-ում:

Աղյուսակ 4. Համայնքի 2016-21թթ. ՀԶՀԾ-ում ներառելու համար առաջարկվող ծրագրերի ցանկը

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագիրն առաջարկողը	Ծրագրի մոտավոր արժեքը, ֆինանսավորման աղբյուրը, հազ. դրամ
1.	Կարկտակայանի տեղադրում	ՏԻՄ	Համայնքի բյուջե՝ 2017թ. -2800,0 2018թ-2800,0 2019թ-2800,0  (հրատապ ծրագիր) Ընդամենը՝ 8400,000
2	Սպանդարյանի գյուղապետարանի շենքի կապիտալ վերանորոգում	ՏԻՄ	Համայնքի բյուջե՝  2017թ. – 2800,000
3	Վողոցների արտաքին լուսավորության	ՏԻՄ	Ընդամենը՝ 2800,000 Համայնքի բյուջե՝

	<i>համակարգերի ընդլայնում, հենասյունների ներկում</i>		<i>2017-2021թթ. – 850,0 (տարեկան) Ընդամենը՝ 4250,000 Պետ. բյուջե՝ 2017թ. - 15000.0</i>
4.	<i>Սպանդարյանի մարզադաշտի վերանորոգում</i>	<i>ՏԻՄ</i>	<i>Համայնքային բյուջե (հրատապ ծրագիր) 2018թ. 3,000.0 2019թ-3.000.0 Ընդամենը՝ 6000,000</i>
5.	<i>Սպանդարյանի նոր կառուցվող մանկապարտեզի շենքի գույքի ձեռքբերում</i>	<i>ՏԻՄ</i>	<i>Համայնքի բյուջե 2017-2021թթ. 10,000.0 (հրատապ ծրագիր) Ընդամենը՝ 10,000.0</i>
6.	<i>Սպանդարյանի մշակույթի տուն Գույքի ձեռքբերում և ջեռուցման համակարգի կառուցում</i>	<i>ՏԻՄ</i>	<i>Համայնքի բյուջե 2017-2019թթ Ընդամենը 700.000</i>
7.	<i>Սպանդարյանի գերեզմանատների ցանկապատերի վերանորոգում</i>	<i>ՏԻՄ</i>	<i>Համայնքի բյուջե 2017-2021թթ. Ընդամենը 3,000.0</i>
8.	<i>Սպանդարյանի ներհամայնքային ճանապարհների վերանորոգում</i>	<i>ՏԻՄ</i>	<i>Համ.բյուջե 2017-2021թթ. Ընդամենը 2,000.0</i>
9.	<i>Հանգստի գոտու ստեղծում</i>	<i>ՏԻՄ</i>	<i>Համ.բյուջե 2018-2021թթ. Ընդամենը 2,000.0</i>
10.	<i>Հարևան համայնքների հետ ոռոգման փակ համակարգի կառուցում</i>	<i>ՏԻՄ</i>	<i>Համ.բյուջե 2017-2021թթ. Ընդամենը 15,000.0</i>
11.	<i>Ուրարտական արձանագրության պահպանում</i>	<i>ՏԻՄ</i>	<i>Համ.բյուջե 2017-2021թթ. Ընդամենը 500.0</i>

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի մտավոր արժեքը (հազ. դրամ)	Գնահատման չափանիշներ (0-10 բալ)					Ընդամենը (բալ)	Ծրագրի առաջնահերթությունը (տեղը)
			Հանրության աջակցությունը	Ուղղակի և անուղղակի շահատուների թիվ	Հարատևություն (կենսունակություն)	Ազդեցություն սոցիալական խոցելի խմբերի վրա, արքատության նվազեցում	Հիմնական միջոցների (ենթակառուցվածքների) պահպանում		
1.	Կարկտակայանի տեղադրում	8400.000	X	X	X	X	X	X	1
2.	Համայնքում նախադպրոցական կրթության ապահովում և բնդլայնում	6.000.0	X	X	X	X	X	X	4
3.	Համայնքում Փողոցների լուսավորության ցանցի բնդլայնում	4200.000	X	X	X	X	X	X	9
4.	Համայնքային ենթակայության ճանապարհների սպասարկում և շահագործում	3000.000	X	X	X	X	X	X	7
5	Գյուղապետարանի շենքի վերանորոգում	2800.000	X	X	X	X	X	X	11
6	Համայնքի մշակույթի տան գույքի ձեռքբերում և ջեռուցում	10,000.0	x	x	x	x	x	x	5
7	Համայնքի մարզադաշտի հիմնանորոգում	15,000.0	X	X	X	X	X	X	3
8	Համայնքի գերեզմանների պարիսպի վերանորոգում	700.0	X	X	X	X	X	X	6
9	Հանգստի գոտու ստեղծում	2.000.0	x	x	x	x	x	x	10
10.	Որարտական արձանագրության պահպանում	500.000	x	x	x	x	x	x	8
11	Հարևան համայնքների հետ ռոռզման փակ համակարգի կառուցում	15.000.0	x	x	x	x			2

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ (ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԱՅԼՆ) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ՕՏԱՐՄԱՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ՀՆԳԱՍՅԱ ԾՐԱԳԻՐԸ**

*Համայնքի սեփականություն համարվող գույքի վիճակի վերլուծությունից երևում է, որ դրանց մի մասը պիտանի չեն հետագա շահագործման համար, այդ պատճառով դրանք նախատեսվում է ընդգրկել համայնքի սեփականություն համարվող գույքի 2016-2020թթ. օտարման հնգամյա ծրագրում (աղյուսակ 8): Այդ նպատակով, մինչև 2016թ. տարեվերջը կգնահատվեն դրանց շուկայական արժեքները և կներկայացվեն համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը՝ աճուրդային եղանակով օտարելու համար: Բացի այդ, նախատեսվում է տարեցտարի բարձրացնել համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության տրամադրման մակարդակը:*

**Աղյուսակ 8. Համայնքի սեփականություն համարվող գույքի (շենքերի, շինությունների, հողամասերի և այլն) կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) 2016-2021թթ. հնգամյա ծրագիր**

Հ/հ	Գույքի անվանումը	Հասցեն	Տարածքը / մակերեսը / քանակը (մ <sup>2</sup> / հատ)	Վիճակի գնահատականը	Այլ բնութագրիչներ	2017	2018	2019	2020	2021	Ենթակա է օտարման, վարձակալության տրամադրման
1.	Բնակավայրի հող		50.000մք		Չի օգտագործվում		+				Օտարում
2.	Գյուղատնտեսական հող		80.000քմ		Օգտագործվում է		+				վարձակալության
3.	Մանկապարտեզի շենք		402քմ		Չի շահագործվում	+					Օտարում
4	Ուսուցչի տուն		708քմ		օտարվելու է բնակիչների և	+					Օտարում

**ՀԶՀԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ) ԵՎ  
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱԶՄՈՒՄԸ, ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ**

**ՀԶՀԾ-ի իրականացումը**

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶՀԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային ծրագրերը և միջոցառումներն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են համապատասխան եկամուտներ և ծախսեր: Գործնականում, ՀԶՀԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը և միջոցառումները) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեի կատարմանը:

ՀԶՀԾ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի ղեկավարն անձնական պատասխանատվություն է կրում ծրագրով նախատեսված աշխատանքների համակարգման, համապատասխան ծախսերի կատարման, արդյունքների ստացման, հաշվետվությունների պատրաստման և համայնքի ղեկավարին ներկայացման համար:

Հիմք ընդունելով համայնքի 2016-2021թ. ֆինանսապես ապահովված ընդհանուր և ոլորտային ծրագրերի ամփոփագիրը (աղյուսակ 6) և հավելված 6-ում բերված՝ համայնքի ոլորտային ծրագրերի նկարագրերը, Հավելված 7-ում ներկայացվում է ՀԶՀԾ-ի իրականացման տեղեկատվությունն՝ ըստ ՏԻՄ-ի գործունեության առանձին ոլորտների: Բերված ձևաչափում սահմանվել են նաև ՀԶՀԾ-ի ոլորտային ծրագրերի միջոցառումներով նախատեսված աշխատանքների կատարման ցուցանիշները, որոնք հնարավորություն են տալիս համեմատել ՏԻՄ-ի ընթացիկ գործունեությունը նախկինում կատարվածի հետ և կանխատեսումներ անել նրանց ապագա գործունեության վերաբերյալ:


**ՀԶՀԾ-ի մշտադիտարկումը (մոնիթորինգը)**

ՀԶՀԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶՀԾ և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից կիսամյակը մեկ անգամ:

ՀԶՀԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Հիմնվելով Հավելված 7-ում ըստ ոլորտների բերված ՀԶՀԾ-ի իրականացման տեղեկատվության վրա, Աղյուսակ 9-ում բերվում է ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

ՀԶՀԾ-ի ներքին մոնիթորինգի արդյունքները փաստաթղթի տեսքով ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն կներկայացնի համայնքի ղեկավարին, վերջինս էլ օրենքով սահմանված կարգով այն կներկայացնի համայնքի ավագանուն՝ ի գիտություն:



**ՀԶՀԾ-ի վերահսկումը**

ՀԶՀԾ-ի վերահսկողությունն սպասելի է ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի ամբողջական իրականացումը, ռեսուրսների արդյունավետ օգտագործումն առաջադրված խնդիրները կատարելու, ակնկալվող արդյունքները ձեռք բերելու և սահմանված նպատակներին հասնելու համար, ծրագրերի պաշտպանվածությունը սխալներից ու ճախողումներից, ժամանակին ու ճշգրիտ տեղեկատվության ստացումը ՏԻՄ-ի ավելի հիմնավորված որոշումների կայացման համար: ՀԶՀԾ-ի վերահսկողությունը ենթադրում է՝

- ՀԶՀԾ-ի մշակման, քննարկման և իրականացման ընթացակարգերի հստակ պահպանում,
- ոլորտային ծրագրերով առաջադրված խնդիրների կատարման արդյունքների ստուգում,
- ոլորտային ծրագրերի պահանջներից շեղումների պարզաբանում և պատճառների բացահայտում,
- ՀԶՀԾ-ի ծրագրերի իրականացումից ստացված արդյունքների ամփոփում և համադրում ծրագրերի նպատակների, միջոցառումների և նախատեսված արդյունքների հետ:

ՀԶՀԾ-ի վերահսկողության արդյունքները ներկայացվում են համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

**ՀԶՀԾ-ի տարեկան և հնգամյա գնահատումը**

ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան կամ հնգամյա գնահատումը կատարում են համատեղ ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն հիմնվելով ՀԶՀԾ-ի կիսամյակային մոնիթորինգների արդյունքների վրա:

ՀԶԲԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և նախատեսված աշխատանքների կատարման ցուցանիշների գնահատման ձևանմուշը բերված է Աղյուսակ 9-ում:

Համայնքի ղեկավարը կազմակերպում և անցկացնում է ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության աշխատանքային քննարկումներ, կազմակերպում և անցկացնում է ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագծի հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով

տվյալ համայնքին վերաբերող ծրագրերի ու միջոցառումների իրականացման հարցերին:

Համայնքում անցկացված հանրային քննարկումների արդյունքներով, ՀԶՇ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն լրամշակում է ՀԶԲԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագիծը, պատրաստում է դրանց վերաբերյալ ավագանուն տրամադրվող տեղեկատվությունը (ամփոփաթերթը և տեղեկանքը) և ներկայացնում համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը ՀԶՇ-ի իրականացման տարեկան հաշվետվության լրամշակված նախագիծը և դրան կից փաստաթղթերը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և որոշման կայացմանը:

ՀԶՇ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագծի կազմման, քննարկման և որոշման կայացման վերաբերյալ ընթացակարգերը նույնությամբ վերաբերում են նաև ՀԶՇ-ի իրականացման հնգամյա հաշվետվության նախագծի կազմմանը, քննարկմանը և որոշման կայացմանը:

### ՀԶՇ-ի վերանայումը

Հիմնվելով ՀԶՇ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶՇ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶՇ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և/կամ համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները կներկայացնի համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամների առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶՇ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշումն ընդունվում է միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶՇ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:



**ՄՊԱՆԴԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՎԻՃԱԿԸ՝**

- *համայնքապետարանի վարչական շենք, որտեղ տեղակայված են նաև բնակչության սպասարկման գրասենյակը,*
- *Սպանդարյան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատության հին (մանկապարտեզի) շենք, այն վերանորոգման կարիք ունի:*
- *համայնքի մշակույթի տուն, որի շենքում գործում է թանգարանը շենքը հիմնանորոգվել է 2016թ.-ին :*
- *համայնքային նշանակության փողոցներ և ճանապարհներ, որոնք ունեն բարեկարգման և ասֆալտապատման կարիք,*
- *Համայնքային մարզադաշտ, որն ունի վերանորոգման կարիք,*
- *Մեկ բազմաբնակարան շենքը, որը ունի նորոգման և հատկապես՝ տանիքների փոխարինման կարիք,*
- *համայնքի կամուրջներ, որոնք ունեն ընթացիկ նորոգման կարիք,*
- *համայնքի գերեզմանատուն՝ որը ունի ցանկապատի վերանորոգման կարիք,*

**Հավելված 2.1. Սպանդարյան համայնքի սոցիալ-տնտեսական**

**ենթակառուցվածքների վիճակի գնահատում**

Ը/հ	Կառույցը	Հասցեն	Կառուցման տարեթիվը	Ծավալը	Ընդհանուր վիճակի գնահատականը	Նորոգման / վերականգնման / փոխարինման կարիքը	Այլ նշումներ
1.	Սպանդարյանի գյուղապետարանի շենք	գ. Սանդարյան	1968	510քմ	բավարար	վերանորոգման	
2.	Մշակույթի տուն	գ. Սանդարյան	1968	476 քմ	լավ	Գազաֆիկացման կարիք	
3.	Նախկին մանկապարտեզի շենք	գ. Սանդարյան	1950	402 քմ	վատ	հիմնանորոգման	
4.	Խմելու ջրի ներքին ջրամատակարարման համակարգ	գ. Սանդարյան	1970	3կմ	լավ		
5.	մարզադաշտ	գ.	1987 թ.	1հա	անբավարար	հիմնանորոգում	

6.	Կամուրջներ	Մանդարյան գ. Մանդարյան	6,0 կմ	վատ	նորոգման, բարեկարգման	
7	Ներբնակավայրային փողոցներ	գ. Մանդարյան	7,0 կմ	վատ	նորոգման, բարեկարգման	
8	Գերեզմանատուն	գ. Մանդարյան	2 հատ	բավարար	ցանկապատման	1-ը

## **ԵԶՐԱՓՈՒՄ**

Սպանդարյան համայնքի սույն զարգացման հնգամյա ծրագիրը իրականացվելու է համայնքի ՏԻՄ-ի, աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից՝ համայնքի ՔՀՄՀ-ի կազմակերպությունների և խմբերի, բնակիչների մասնակցությամբ:

Համայնքի 2016-2021թթ. ՀԶՄ-ն ամբողջական ծավալով իրականացնելու հարցը մեծապես կախված կլինի համայնքի առաջիկա հինգ տարիների բյուջեում նախատեսվող մուտքերի (հատկապես՝ սեփական) փաստացի կատարման մակարդակից, ինչպես նաև դրանց խնայողաբար ու արդյունավետ ծախսումից:

ՀԶՄ-ի իրականացումը շատ բանով պայմանավորված կլինի նաև այն բանից, թե համայնքի ՏԻՄ-ին ինչքանով կհաջողվի նպատակային և արդյունավետ համագործակցություն ծավալել ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմինների (հատկապես՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի), ՀՀ-ում (մասնավորապես՝ ՀՀ Շիրակի մարզում) գործող միջազգային և տեղական դոնոր, ՔՀՄՀ կազմակերպությունների և խմբերի, գործարարների հետ՝ համայնքային տնտեսությունում ապահովելու ՀԶՄ-ով պլանավորված ներդրումները և միջոցները:

